

1. Քիւրդական իշխանութեանց կործանումէն մինչ 1877ի Ռուս-թիւրքական պատերազմը .

2. Պատերազմէն մինչև Համիտիէ հեծելազնդերու կազմութիւնը .

3. Համիտիէներու կազմութենէն մինչև Օսմ. Սահմանադրութեան հրատարակութիւնը .

4. Օսմ. Սահմանադրութեան սկիզբներէն մինչ օրս, այսինքն Յրդ տարին :

Արդ, մեր պատմական գծին շարունակութեանը սկսելէ առաջ պէտք է դիտել որ, Հայաստան արչաւող բոլոր այլազան ցեղերու պատերազմների ու տիրապետութեանց ժամանակ, տեղական ազգաբնակչութեանց մէջ Քիւրդերը լինելով աւելի խափառական քան նստակեաց, աւելի շատ իբր լեռնականներ, յաջողեր են միշտ խուսափիլ արչաւողներու պատահարի պէս անցողական ու անուանական նուաճումներէն, և հետեւաբար չլրելով դաշտայիններու վրայ ծանրացած ազդեցութիւնները, ինչպէս մասամբ չվայելելով քաղաքակրթական խաղաղ աշխատանքի բարիքները, միայն իրենց անկախութիւնը պահպանելու համար մնացեր են Հայաստանի սարերը, ու թափառեր են տեղէ տեղ, ապրելով իրենց նախնիներէն ժառանգած աւանդութիւններն ու սովորութիւնները :

Օսմանցիները իրենց տիրապետութիւնը Հայաստանի մէջ հիմնովին հաստատելէն յետոյ, ինչպէս տիրեցին Հայերուն, տիրեցին նոյնպէս Քիւրդերուն, բայց տարբեր պայմաններով :

Սուլթան Մէհմէտ Բ.ը, Հայոց Պատրիարքութիւնը հաստատելով Կ. Պոլսի մէջ, ու Հայերի կրօնական ու աշխարհական գործերի վարչութիւնը պատրիարքական իշխանութեան յանձնելով, անուղղակի անոր դարձուց թիւրք-կառավարական պաշտօնէութեան մի ճիւղ, պահելով իր աչքի անմիջական հովորդութեան տակ : Մայրաքաղաքի ու Հայաստանի այլեայլ մասերի կենցաղավարութեան եղանակը փոխուեցաւ քաղաքականապէս ու տնտեսականապէս, ու տարբեր տարբեր վիճակների ենթարկուեցաւ . ուրիշ էին լեռնական չրջանները, օրինակի համար Զէյթուն, Սասուն, Մոկս, Շատախ, Բերկրի,